Տեղ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 85 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 20 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1360 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ:
Գյուղը 10-րդ դարում հիմնադրել է Սյունյաց թագուհի Շահանդուխտը և միջնադարում Սյունյաց աշխարհի խոշոր ու նշանավոր բնակավայրերից էր: Տեղ գյուղում և շրջակայքում են գտնվում Սբ.Գևորգ, «Սրոնեցի» կոչվող եկեղեցիները, բազմաթիվ խաչքարերով գերեզմանոցներ, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի դամբարանադաշտ:
Գյուղի մեջ գտնվում են ուշ միջնադարի հայկական բնակելի ճարտարապետության արժեքավոր հուշարձաններ. Մելիք-Բարխուդարյանների «Ամարաթը» (1783թ.), «քարե օթախը» (թաղածածկ սենյակներից բաղկացած բնակելի համալիր), մի շարք գլխատներ:
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 3867 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3594 հա, որից՝
- վարելահող՝ 2340 հա, արոտ՝ 274 հա, այլ հողատեսք՝ 980 հա
- բնակավայրերի հողեր՝ 187 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 34 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 16 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 6 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 1 հա,
- անտառային հողեր՝ 18 հա, որից անտառածածկ՝ 18 հա
- ջրային հողեր՝ 11 հա